ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 05

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում **10.10.2014**թ տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին
Ս.Կարապետյան ՀՀ գյուղնախարար
Ն. Մովսիսյան մարզպետի տեղակալ
Մ Աբգարյան մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
Ա Մանուկյան ՀՀ ԱԻՆ Արագածոտնի փրկարարական վարչության պետ
ՀՀ Արագածոտնի մարզի ԲԿ ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Աշնանացանի կազմակերպման գործընթացի մասին: /Զեկուցող՝ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:

2. Մարզի համայնքներին նախորդ տարիներին հատկացված սերմացուների գումարների հավաքագրման աշխատանքների մասին: /Զեկուցող՝ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:

3. Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների, ինչպես նաև հողի հարկի և գույքահարկի շտեմարանների հետ տարվող աշխատանքների մասին /զեկ. մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:

4. Համայնքների ղեկավարների կողմից ավագանիների որոշումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում մարզպետարան ներկայացնելու, ինչպես նաև դրանց ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու մասին /զեկ. մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ/:

5. Այլընտրանքային ծառայության մասին: /զեկ. մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային բաժնի պետ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ/:

6. Մարզի համայնքներում քաղաքացիական պաշտպանության պլանների կազմման, համաձայնեցման և հաստատման մասին/զեկ. մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային բաժնի պետ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ/:

7. Հայտարարություններ

Հոկտեմբերի 10-ին Արագածոտնի մարզպետարանում կայացավ մարզխորհրդի հերթական նիստը, որին մասնակցեց նաև ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը:
Մարզպետ Սարգիս Սահակյանը ներկայացրեց օրակարգը, համաձայն որի առաջին հարցը վերաբերում էր աշնանացանի կազմակերպման գործընթացին:
Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յուրա Ազատյանը զեկուցեց, որ այսօրվա դրությամբ աշնանացան է կատարվել մոտ 9200 հա ցանքատարածության վրա: Տարվա վերջին աշնանացանը կկազմի 12000 հա: Նշվեց, որ այս տարվա աշնանը մարզ է ներկրվել 75 տոննա առաջին վերարտադրության աշնանացան ցորենի սերմացու և բաշխվել է համայնքներին: Ընթացքի մեջ են նաև կառավարության կողմից իրականացվող ազոտական պարարտանյութի և դիզելային վառելանյութի, ինչպես նաև գարնանացան գարու, առվույտի, կորնգանի սերմացուների տրամադրման ծրագրերը: Յու. Ազատյանը անդրադարձավ ՀՀ կառավարության կողմից ցրտահարության հետևանքով տուժած գյուղացիական տնտեսություններին տրված հատուցման և համայնքներում ոռոգման ջրի խնդիրների ու դրանց լուծման հարցերին :
Հանրապետությունում և, մասնավորապես, Արագածոտնում, գյուղատնտեսական ծրագրերի ընթացքը և առաջիկա անելիքները ամփոփեց գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը: Նա ասաց, որ տարեսկզբին ևս մասնակցել է մարզխորհրդի նիստին, որտեղ համատեղ քննարկվել են տարվա ընթացքում կատարվելիք աշխատանքները: Այժմ էլ մարզխորհրդի նիստին մասնակցելու նպատակը այդ աշխատանքների ամփոփումն է և նոր խնդիրների քննարկումը: Նախարարը նշեց, որ ոլորտը շարունակում է գերակա համարվել երկրի տնտեսության զարգացման մեջ և նախագահ Սերժ Սարգսյանի հանձնարարականը կա՝ գալիք տարում շարունակել առ այսօր իրականացվող բոլոր ծրագրերը: Անդրադարձ եղավ հեռավոր համայնքների արոտավայրերի զարգացման, ոռոգման կաթիլային համակարգի ներդրման, կարկտապաշտպան ցանցերի համակարգի ստեղծման, գյուղատնտեսական տեխնիկայի ներկրման, ապահովագրական համակարգի ներդրման, նոր այգիների հիմնման, գյուղատնտեսության գույքի համատարած հաշվառման և այլ խնդիրներին:
Օրակարգային հաջորդ հարցը համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների, ինչպես նաև հողի հարկի և գույքահարկի շտեմարանների հետ տարվող աշխատանքների մասին էր: Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Նորայր Գալստյանը ներկայացրեց, որ հոկտեմբերի 1-ի դրությամբ սեփական եկամուտները հավաքագրվել է 67 %-ով: Այդ թվում՝ հողի հարկը կազմել է 62.2, գույքահարկը՝ 67.7%:

Հարցին անդրադարձավ մարզպետ Սարգիս Սահակյանը: Կարևորելով խնդիրը, նա համայնքապետերին հորդորեց առավելագույն ուշադրություն դարձնել սեփական եկամուտների կատարմանը, քանզի դրանով է արտահայտվում համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման արդյունավետ ընթացքը:

Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. Հովսեփյանի և զորահավաքային բաժնի պետ Լ. Գրիգորյանի զեկույցի ավարտին մարզպետն իր դիրքորոշումն արտահայտեց ու հանձնարարականներ տվեց քննարկվող մյուս հարցերի վերաբերյալ: Դրանք վերաբերում էին համայնքների ղեկավարների կողմից ավագանիների որոշումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում մարզպետարան ներկայացնելուն, ինչպես նաև դրանց ՀՀ օրենսդրությանը համապատասխանելուն, այլընտրանքային ծառայությանը, մարզի համայնքներում քաղաքացիական պաշտպանության պլանների կազմմանը և այլն:

Մարզպետի կողմից առանձնակի ուշադրության արժանացավ Իրաքում ծայրահեղականների գործողությունների հետեւանքով տուժած և իրենց բնակավայրերից տեղահանված եզդիներին մարզի համայնքներից համապատասխան օգնություն տրամադրելու գործի կազմակերպումը: Այն ներկայումս ընթացքի մեջ է, և համայնքների կողմից գործնական արձագանքը շարունակվում է:

Նիստը եզրափակվեց ՀՀ ԱԻՆ Արագածոտնի փրկարարական վարչության պետ Ա Մանուկյանի հնչեցրած հայտարարություններով, որոնց վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտեց մարզպետ Ս.Սահակյանը և առաջարկեց համայնքապետերին համագործակցել փրկարարական վարչության հետ:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ